Հարգելի պարոն մարզպետ, ավագանի, , հյուրեր

Ձեզ եմ ներկայացնում 2014թ-ին համայնքում իրականացված աշխատանքների մասին հաշվետվությունը:

Հաշվետու տարում տեղի է ունեցել ավագանու 7 նիստ: Քննարկվել են ինչպես սոցիալական, այնպես էլ ընթացիկ հարցեր և կայացել թվով 47 որոշումներ:

Տարվա ընթացքում քաղաքացիներից ստացվել են տարբեր բնույթի 394 դիմումներ, որից 387-ը բավարարվել է 7-ը մերժվել:

Կայացվել են թվով 361 տարբեր բնույթի որոշումներ:

Ըստ հաստատված գրաֆիկի աշխատակազմի համայնքային ծառայողները մասնակցել են համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացներին և ստացել համապատասխան վկայականներ:

Տարվա ընթացքում համայնքում ծնվել է425 երեխա, գրանցվել է 323 մահ :

Այժմ ներկայացնեմ 2014 թ. բյուջետային տարվա գործունեությունը

2014թ. համայնքային բյուջեի եկամտային մաս նախատեսվել է 199 միլիոն 116 հազար դրամ, այդ թվում համայնքի բյուջեի միջոցների 2013 թ տարեվերջի մնացորդը, որը կազմել է 42 միլիոն 492 հազ դրամ, ծախսային մաս 199 մլն 116 հազար դրամ:

Այդ թվում գույքահարկ 24 միլիոն դրամ, հողի հարկ 4 միլիոն 600 հազ դրամ, տեղական տուրքեր 4 միլիոն 800 հազ դրամ, պետական տուրքեր 4 միլիոն,վարձակալական հողի վարձավճար 700 հազ դրամ, այլ եկամուտներ 1միլիոն 800 հազար դրամ/ նշեմ որ 2014 թ այլ եկամուտների պլանը 2013 թ նկատմամբ պակաս է նախատեսված 6 մլն դրամի չափով , սա պայմանավորված է նրանով որ մանկապարտեզներում ծնողական գանձույթները ամբողջությամբ թողնվել են իրենց տնօրինմանը, գանձվել և մուտքագրվել է ընթացիկ հաշվներին և օրենքով սահմանված կարգով նպատակաուղղվել է սննդի ձեռք բերմանը, սա որպես մանկապարտեզի եկամուտ համայնքային բյուջեում չի արտացոլվել : Պատվիրակված լիազորությունների իրականացմանը /ՔԿԱԳ բաժին/ նախատեսվել է 3մլն 981 հազ դրամ ; Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքին տրամադրվող դոտացիաներ նախատեսվել է 111 մլնիոն 864 հազ դրամ:

Գույքահարկի պլանը կատարվել է 24 միլիոն 421 հազ դրամ կամ 100.8 %, հողի հարկինը 4 մլն 725հազ դրամ կամ 102.7%, ոչ հարկային եկամուտները 3մլն 059 հազ դրամ կատարվել է 169.9%, , վարձակալությամբ հատկացված հողերից վարձավճարների հավաքագրումը կազմել է 855 հազ. դրամ կամ 122.1% ,տեղական տուրքերի պլանը կատարվել 5 մլն 021 հազ կամ 104.6% պետական տուրքեր102.3% : Համայնքային բյուջեն կատարվել է 111.5% :

Ըստ բնագավառների ծախսերը բաշխվել են հետևյալ համամասնությամբ:

Կրթությանը նախատեսվել է 70 մլն 898 հազ դրամ գումար, աճը 2013թ. համեմատությամբ կազմել է 3.4% /68մլն551 հազ դրամ/ , այդ թվում նախադպրոցական կրթությանը 41 մլն 578 հազ դրամ - 38 մլն 750 հազ. դրամի դիմաց , արտադպրոցական կրթությանը 29 մլն 320հազ դրամ- 25 մլն 212 հազ դրամի դիմաց:

Համայնքում սանիտարական մաքրման և կոշտ աղբի և ավլվածքի հավաքման ու տեղափոխման ծառայությունների մատուցման համար ոլորտին նախատեսվել է 34 մլն 320 հազ դրամ- 32մլն 770 հազար դրամի դիմաց, համայնքի գերեզմանատան և քաղաքի կանաչ տարածքների պահպանման ու խնամքի համար նախատեսվել է 4 մլն 255 հազ դրամ :

Հանգստի և սպորտի ծառայությունների, ինչպես նաև այլ մշակութային միջոցառումների կազմակերպման ու անցկացման նպատակով համայնքում իրականացվող միջոցառումների համար նախատեսվել է 2.8 մլն դրամ , մարզական միջոցառումների /մրցույթներ- ամառային բակային ճամբարներ և այլն/ համար հատկացվել է 2.3 մլն դրամ գումար, ամանորյա և այլ միջոցառումների համար 700 հազ դրամ, համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին որպես ֆինանսական օգնություն 1.2 մլն դրամ: Ճանապարհային տնտեսության վիճակի բարելավման համար 3.6 մլն դրամ, լուսավորության ապահովման համար 1.2մլն դրամ, այլ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար 1 մլն դրամ:

Ըստ ոլորտների 2014թ. բյուջեի ծախսերը կատարվել են:

Կրթությանը նախատեսված 70 միլիոն 898 հազ դրամ գումարից նախադպրոցական կրթությունը ֆինանսավորվել է 40 մլն 804 հազ դրամ/ ևս 7 մլն դրամի չափով ծնողական գանձում /: Արտադպրոցական կրթութունը 29 մլն 745 հազ դրամ, նախատեսված ծախսերը կատարվել են ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների :

Կոմունալ տնտեսությանը՝ քաղաքի փողոցների սանիտարական մաքրման ու աղբահանման իրականացման, ինչպես նաև կանաչ տարածքների պահպանման և խնամքի համար ֆինանսավորվել է 36 մլն 816 հազ դրամ : Հանգստի և սպորտի ծառայությունների, ինչպես նաև այլ մշակութային միջոցառումների կազմակերպման ու անցկացման համար - մարզական միջոցառումներին հատկացվել է 1մլն 500 հազ. դրամ , համայնքում մասսայական միջոցառումների անցկացման համար՝ 800 հազ. դրամ: Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին որպես ֆինանսական օգնություն համայնքի ղեկավարի որոշմամբ 25 քաղաքացու տրվել է 770 հազ դրամ գումար :

Աաշխատակազմի պահպանման համար ծախսվել է 32 միլիոն 370 հազ. դրամ : Ըստ ոլորտների տարվա ընթացքում ծախսերի թեր ֆինանսավորում չի եղել, ունենք 40 մլն 587 հազ դրամ տարեվերջյան ազատ մնացորդ, որը նպատակաուղղվել է 2015 թ ընթացքում կապիտալ ծրագրերի ֆինանսավորմանը, իսկ ծրագրեր համայնքում շատ կան սկսած բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների նորոգում , նախատեսված է նորոգելու համայնքի մեկ բ/բ շենքի տանիք, նախագծա նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների համար պայմանավորվածություն կա մինչև մարտի վերջ պատրաստ կլինի աշխատանքները կսկսենք, պատվիրվել է նաև քաղաքի հարավ արևմտյան թաղամասի և փախստականների թաղամասի կոյուղու համակարգի կառուցման փաստաթղթերի պատրաստումը, աշխատանքները կսկսվի ամռանը:

Գյուղատնտեսության և հողօգտագործում

Այս բնագավառում 2014 թ իրականացվել են մի շարք աշխատանքներ՝ ,,Մեշա,, հանդամասում, Փախստականների թաղամասերում աջակցել ենք գործող ոռոգման առուների նորոգմանը :Ճշտվել է համայնքի հողային հաշվեկշիռը ,չափագրվել և օրինականացվել են քաղաքացիների կողմից օգտագործվող հողերը: Ստացվել և հողօգտագործողներին են բաժանվել շուկայականից ցածր գներով պետության կողմից հատկացված դիզ վառելիքն ու պարարտանյութը, օրենքով սահմանված կարգով տարածքներին տրվել են համապատասխան հասցեներ, արվել է հնարավոր ամեն ինչ հողերի օգտագործումը արդյունավետ դարձնելու համար ,աշխատանքներ են կատարվում համայնքի տարածքում սեփականատերերի կողմից չմշակվող սեփականաշնորհված ջրովի հողերի մշակման համար: ()շտել ենք 12 ընտանիք արտերկրում են-6.8հա և կան հողատեր մահացած՝ ժառանգություն չի ձևակերպված-6.5 հա և էլի կան որ պետք է ճշտել)

Կապիտալ շինարարության և նորոգում

Համայնքային բյուջեի միջոցների հաշվին մասնակի գազաֆիկացվեցին թիվ 1 և 2 մանկապարտեզները , շենքերի մասնակի վերանորոգման աշխատանքներ կատարվեցին մասնավորապես 2-րդ մանկապարտեզում սան հանգույցը 1.2 մլն դրամ , հիմնանորոգվել է մեկ բ/բ բնակելի շենքի տանիք 10.5 մլն ,կառուցվել է Ավագյան փողոցի և ուսումնարանի թաղամասի լուսավորության ցանցը 1մլն 96 հազ, Միկոյան փողոցի մայթի մի հատվածը 4 մլն 199 հազ:

Համայնքային բյուջեի միջոցների հաշվին նախատեսված էր և իրականացվեց քաղաքի մի շարք փողոցների փոսային լցումներ: Բնակչության անվտանգ երթևեկության ապահովման նպատակով կատարվեցին կենտրոնական փողոցների երթևեկելի մասի առանցքի և հետիոտային անցումների նշագծման աշխատանքներ:Հիմնանորոգվեց քաղաքի մի շարք փողոցների, հիմնականում կենտրոնից դուրս, փողոցային լուսավորության ցանցը, ծրագրի մնացած մասը կիրականացվի այս տարում : Տարվա ընթացքում քաղաքում կառուցվել են 1 առանձնատուն մոտ 12 մլն դրամ արժեքով, 3 խանութ և մեկ հասարակական սպասարկման կետ 18 մլն դրամ ընդհանուր արժեքով:

Կոմունալ տնտեսություն

Քաղաքում կատարվում է ասֆալտապատ ծածկույթի սանիտարական մաքրման, կոշտ աղբի և ավելվածքի տեղափոխման , կանաչ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքներ: Քաղաքի սանիտարական վիճակը բարձր մակարդակի վրա պահելու նպատակով ձեռք է բերվել փողոցները լվացող սարքավորումներ և սեզոնին մեր փողոցները շաբաթական երեք անգամ լվացվում են, փողոցային լոսավորության ցանցի նորոգման համար հատուկ մեքենա ,որը ապահովում է ոչ միայն մեր համայնքի այլ նաև մարզի ինչպես համայնքների այնպես էլ անհատ քաղաքացիների ու կազմակերպությունների սպասարկման աշխատանքները:

Համայնքում այս բնագավառում հիմնական խնդիրը Միկոյան 16 վթարային բ/շ է:

Կրթություն

Համայնքում գործող 3 մանկապարտեզներն ունեն 10 խումբ, հաճախում են 275 երեխաներ: Խնդիր կա շենքային պայմանների հետ, կապված ,շենքերը հին են նախագծային հզորությունները չեն թույլ տալիս բավարարելու ներկայիս պահանջները , դիմել ենք պ-ն մարզպետին միջնորդելու 2004 թ կրթության ազգային ինստիտուտին հատկացված շենքը համայնքին հետ վերադարձնելու համար հույսով ենք ,որ կստացվի և կլուծվի ևս նեկ խնդիր; Տեղեկացնեմ ,որ աշնանը հետ ենք վերցրել համայնքի սեփականություն հանդիսացող նախկին թիվ 4 մանկապարտեզի շենքը ,որը նույնպես կառավարության որոշմամբ հատկացվել էր հայ ավետարանչական եկեղեցիների միությանը ; Համայնքում գործում է մեկ գեղարվեստի դպրոց՝ 45 սաներով,որը չունի դպրոցի շենք տեղավորված է ավագ դպրոցում, վերը նշված շենքի հետ վերադարձմամբ կլուծվի նաև այս հարցը: Մանկական Ստեղծա·ործական Կենտրոնում 10 տարբեր խմբերում ուսանում են թվով 124 երեխաներ:

Համայնքում գործում է մանկական առողջության վերականգնողական կենտրոն /լողավազանը/, որը սիրելի վայր է երեխաների համար :Օգտվում են նաև մեծահասակները:

Քաղաքային համայնքն ունի նաև մարզադպրոց և մարզադաշտ, որտեղ 6 խմբերում մարզվում են թվով 156 երեխաներ: Ունենք հանրապետական մրցաշարերի մասնակցության փորձ ունեցող վոլեյբոլի ինչպես պատանիների, այնպես էլ մեծահասակների թիմ, մեր վոլեյբոլի թիմը 2014 թ հանրապետական առաջնությունում գրավեց երրորդ պատվավոր տեղը , սակայն կան խնդիրներ առանձին մարզաձևերում:

Աշխատանքներ են կատարվել նաև համայնքում մշակույթի բնագավառում: Կազմակերպվել են միջոցառումներ նվիրված ամանորին և սուրբ ծննդյան տոներին,կրթության օրվան , երեխաների պաշտպանության միջազգային օրվա և այլը:

Արվել է հնարավորը համայնքում հասարակական կարգը պահպանելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքում արձանագրվել է խուլիգանության 1 դեպք,3 հոգի ենթարկվել են վարչական պատասխանատվության, զորակոչից խուսափելու 3 դեպք այլ միջադեպեր չեն արձանագրվել:

2014թ-ից այլ ծրագրերի շարքում համայնքը մասնակցում է նաև <<Բաց աշխարհ>> ծրագրին, որի շրջանակներում <<Տեղական ինքնակառավարումը Հարավային Հայաստանում>> խորագրով տարեսկզբին ԱՄՆ-ում կազմակերպված հանդիպմանը մեր քաղաքը ներկայացրեց քաղաքապետի տեղակալ Ավագյանը, որտեղ համայնքները ներկայացրել են կառավարման իրենց մոդելներն ու առանձնահատկությունները, առկա խնդիրները տեղական ինքնակառավարման համակարգում: Համաձայնություն է ձեռք բերվել մի քանի ոլորտներում ծրագրերի իրականացում հարցում:

Ավարտելով հաշվետվությունը նշեմ, որ Համայնքում կան բազում սոցիալ տնտեսական կարևոր խնդիրներ, որոք լուծում են պահանջում: Անհրաժեշտ է բոլորիս կողնից մեծածավալ, սրտացավ աշխատանք և համայնքի առջև պատասխանատվության զգացում: Ակնկալում ենք համագործակցություն հասարակական կազմակերպությունների, միջազգային դոնոր կազմակերպությունների և անհատ ձեռներեցների հետ, համայնքում գոյություն ունեցող խնդիրների լուծման գործում:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ